DOI: 10.54503/1829-4324.2023.1-229

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ

Տաթևիկ Սմբատի Փարսադանյան

Հոդվածը ստացվել է՝ 10.02.23, ուղարկվել է գրախոսման՝ 14.03.23, երաշխավորվել է տպագրության՝ 08.05.23

Ներածություն: Անվտանգությունը մարդու հիմնական կարիքն է: Ըստ Մասլոուի տեսության այն գերագույն պահանջմունքներից մեկն է, որ մարդ ձգտում է պահպանել:

Հարմարավետ և անվտանգ աշխատանքային պայմանները աշխատանքի արտադրողականության և անվտանգության, ինչպես նաև աշխատողների առողջության վրա ազդող հիմնական գործոններից են: Արդյունաբերական վնասվածքների և մասնագիտական հիվանդությունների աճը աշխատանքային պայմանների և աշխատանքի պաշտպանության անմխիթար վիճակի հետևանք է: Արդյունքում, աշխատանքի պաշտպանության մակարդակն ազդում է երկրի ժողովրդագրական իրավիճակի և բազմաթիվ սոցիալական խնդիրների լուծման վրա: Տնտեսական վնասներից խուսափելու համար աշխատանքի անվտանգության պահպանման կառուցակարգերի որոնումը և պահպանումը դառնում է արդիական:

Հոդվածի նպատակը և խնդիրները: Սույն հետազոտության նպատակն է կազմակերպությունների հետևողական աշխատանքի վերլուծություն իրականացնել՝ արտադրական վթարների և տեխնածին տուժածների տեսանկյունից, որի համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- վերլուծել և համեմատել գրանցված տեխնածին արտակարգ դեպքերից տուժածների թիվը ըստ սեռերի,
- առաջարկել աշխատանքի պաշտպանության ու անվտանգության բարելավման ուղղված միջոցառումներ:

Գրականության վերլուծություն: Օնորատի Մ., Յոհանսոն Դե Սիլվա Ս., Միլան Ն. և այլոց «Աշխատանք Հայաստանում ավելի լավ ապագայի համար: Աշխատատեղերի դինամիկայի վերլուծություն» զեկույցի նպատակն է վերլուծել հիմնական հարցերը. արդյոք մակրո միջավայրը, գործարար միջավայրը և կարգավորող դաշտը (այդ թվում աշխատանքային կարգավորումները) նպաստավո՞ր են (ֆորմալ) աշխատատեղերի ստեղծման համար: Ինչպե՞ս կարելի է լավագույնս օգտագործել ներկայումս մեծ տոկոս կազմող տնտեսապես ոչ ակտիվ մարդկանց մարդկային կապիտալի ներուժը: Արդյոք տեղի՞ է ունենում աշխատողների անցում ցածրից դեպի բարձր արդյունավետ ոլորտներ և ինչպե՞ս կարելի է դյուրինացնել այդ անցումը: Որքանո՞վ են զբաղվածության արդյունքները հետևանք տեղեկատվական անհամաչափությունների և ընկերությունների կողմից պահանջվող և ֆորմալ կրթական համակարգի, տեխնիկական և մասնագիտական կրթության և վերապատրաստումների (ՏՄԿՎ) համակարգի, չափահասների մասնագիտական ուսուցման արդյունքում առաջարկվող հմտությունների միջև անհամապատասխանության: Ի վերջո, քաղաքականության մակարդակում ի՞նչ

բարեփոխումներ կարող են բարելավել աշխատատեղերի արդյունքները[1]:

Լ.Ն. Ռոմանչենկոն, Ա.Ի. Շարիֆուլինան «Արտակարգ իրավիճակների տնտեսական հետևանքները» հետազոտական աշխատանքի արդիականությունը հիմնավորում են նրանով, որ տեխնածին արտակարգ իրավիճակները հսկայական ազդեցություն են ունենում մարդու կյանքի գրեթե բոլոր ոլորտների, բնական միջավայրի և, առհասարակ, պետության տնտեսական անվտանգության վրա: Վնասի բնույթը կարող է լինել բազմազան և նշանակալի: Այն չափելու համար օգտագործվում են տարբեր մեթոդներ, որոնցից տեխնածին արտակարգ իրավիճակների պատճառած վնասի որոշման գործում առաջատար դեր են խաղում տնտեսական ցուցանիշները և մեթոդները: Հնարավոր տնտեսական հետևանքների իմացությունը նպաստում է արտակարգ իրավիճակների կանխարգելման և ժամանակին լուծարման ճիշտ միջոցների մշակմանը, ինչը կարող է էապես նվազեցնել արտակարգ իրավիճակների և՛ տնտեսական, և՛ սոցիալական և բնապահպանական վնասները[2]:

Ի. Պիլևան, Ա. Դոմոստրեևան, Ա. Կուզնեցովա «Ձեռնարկությունում աշխատանքի առողջապահության և անվտանգության բաժնի կառավարման ժամանակակից մեթոդները» հոդվածում գտնում են, որ յուրաքանչյուր աշխատավայրում առողջ և անվտանգ աշխատանքային պայմաններ ստեղծելու խնդիրը գնալով ավելի արդիական է դառնում: Լավագույն միջազգային և ներքին փորձը ցույց է տալիս, որ կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կառավարման ժամանակակից համակարգերի մշակումն ու ներդրումը ոչ միայն օգնում է վերացնել արդյունաբերական վտանգները, այլև բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը և կազմակերպության մրցունակությունը, ինչը ներկայումս ընդունված է կառավարությունների, գործատուների և աշխատողների կողմից[3]:

Մեթոդաբանություն: Սույն աշխատանքի ուսումնասիրության հիմք են հանդիսացել օտարերկրյա տնտեսագետների աշխատանքները, գիտաժողովների նյութերը, միջազգային կազմակերպությունների զեկույցները և այլն: Հետազոտության ընթացքում կիրառվել են տվյալների հավաքագրման, համեմատական, ընդհանրացման մեթոդները:

Վերլուծություն: Աշխատանքային գործունեության արդյունավետ իրակա-

---

[1] Օնորատի Մ., Յոհանսոն Դե Սիլվա Ս., Միլան Ն. և այլոց Աշխատանք Հայաստանում ավելի լավ ապագայի համար: Աշխատատեղերի դինամիկայի վերլուծություն: Համաշխարհային բանկ, հոկտեմբեր 2019

[2] РОМАНЧЕНКО Л.Н., ШАРИФУЛЛИНА А.И. ЭКОНОМИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ ТЕХНОГЕННЫХ ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЙ, ГРАЖДАНСКАЯ ОБОРОНА НА СТРАЖЕ МИРА И БЕЗОПАСНОСТИ. Издательство: Академия Государственной противопожарной службы Министерства Российской Федерации по делам гражданской обороны, чрезвычайным ситуациям и ликвидации последствий стихийных бедствий (Москва). Материалы III Международной научно-практической конференции, посвященной Всемирному дню гражданской обороны. В 3-х частях. Том Часть III . 2019. стр. 191-200

[3] Актуальные проблемы охраны труда: матер. IV Всероссийской научно-практической конференции с международным участием; 22–23 ноября 2018 года / СПбГАСУ. – СПб., 2018. – 190 с., стр. 48

նացման համար խիստ անհրաժեշտ է պահպանել աշխատանքի անվտանգությունը և աշխատողների պաշտպանությունը:

«Գործունակություն» հասկացությունը տարբերվում է «աշխատունակություն» հասկացությունից: Գործունակությունը իր գործողություններով աշխատանքային իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար աշխատանքային պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (աշխատանքային գործունակություն) լրիվ ծավալով ծագում է տասնվեց տարեկան դառնալու պահից[1], բացառությամբ սույն օրենսգրքով[2] և այլ օրենքներով[3] նախատեսված դեպքերի: Հետևաբար, մարդու գործունակությունը հանդիսանում է նրա աշխատունակության հիմքը:

Աշխատանքի հիմնական ֆունկցիաներն են[4]՝ սոցիալական (հասարակական կյանքի հանգամանքների վերարտադրումը) և տնտեսական (մարդու կենսագործունեության վերարտադրություն):

Աշխատունակությունը մարդու վերարտադրողականության հնարավորությունն է: Այսինքն, յուրաքանչյուր աշխատող պետք է աշխատունակ լինի իրականացնելու իր աշխատանքի տնտեսական գործառույթը:

Աշխատանքային գործունեություն իրականացնելիս աշխատողը ենթարկվում է արտադրական անբարենպաստ գործոնների ազդեցությանը, որոնք որոշակի ժամանակ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում են առողջական վիճակի և աշխատունակության վրա:

Գոյություն ունի երկու տեսակի անաշխատունակություն կապված աշխատանքային գործունեության և այլ պատճառներով: Տարբերում են աշխատանքի ժամանակ մարդկանց աշխատունակության կորուստի 3 աստիճան՝ ժամանակավոր, հաստատուն (կայուն)[5] և ամբողջական:

Մասնագիտական աշխատունակության կորստի աստիճանը սահմանվում է բժշկասոցիալական փորձաքննությամբ՝ ելնելով ախտաբանական վիճակով՝ 10-100 տոկոս[6]: Աշխատունակության կորստի դեպքում կազմակերպությունը չի կարող է աշխատել իր ներուժի չափով:

Աշխատանքային գործունակության հաստատուն կորուստը ծագում է ծերության, հիվանդության կամ հաշմանդամության ժամանակ, երբ մարդը դառնում է մասնագիտորեն ոչ պիտանի:

Աշխատունակության ամբողջական կորուստը ծագում է այն ժամանակ, երբ մարդը դառնում է աշխատանքային գործունեության համար ոչ պիտանի:

Աշխատունակության ժամանակավոր կորուստը ծագում է աշխատանքային

---

[1] https://www.irtek.am/views/act.aspx?aid=150003

[2] ՀՀ աշխատանքային օրենսգրքի, 17-րդ հոդված: https://www.irtek.am/views/act.aspx?aid=150003

[3] «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով սահմանվում է 16 տարեկանից ցածր տարիքի քաղաքացիների աշխատանքի իրավունքը:

[4] Прока Н. И. Экономика труда и организации АПК.-М.: КолосС. 2009.-440с.: ил.-(Учебники и учеб. пособия для студентов высш. учеб. заведений). стр. 6

[5] https://www.irtek.am/views/act.aspx?aid=119053

[6] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24068: ՄԱՍ 2

օրվա ընթացքում, աշխատուժի օգտագործման արդյունքում և վերականգնվում է ամբողջությամբ ֆիզիոլոգիական հանգստի հաշվին: Որքան վատ են աշխատանքային պայմանները, այնքան ավելի մեծ է աշխատունակության ժամանակավոր կորուստը և նույնքան էլ մեծանում է հաստատուն (կայուն) և ամբողջական աշխատունակության կորուստ ծագելու վտանգը:

Մասնագիտական աշխատունակության կորստից խուսափելու համար անհրաժեշտ է ոչ միայն զարգացնել և փոփոխել փոխհատուցման համակարգը, այլ որպես գլխավոր պայման՝ հենց աշխատանքային պայմանների բարելավումը և աշխատանքի անվտանգության պաշտպանությունը:

Սակայն Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի (ԱՄԿ) աշխատանքային իրավունքների համաշխարհային ինդեքսի ութերորդ հրատարակությունը դասակարգում է աշխարհի 149 երկրներ՝ աշխատողների իրավունքների պաշտպանության առումով: Այն իր մեջ ներառում է ոչ միայն անվտանգ գործունեության կանոնները, այլև աշխատողների աշխատանքային չարաշահումների սկզբունքները[1]:

2021 թ.-ին ինդեքսին ավելացվել է հինգ նոր երկիր՝ **Հայաստանը,** Գաբոնը, Գվինեան, Ղրղզստանը և Նիգերը: Ըստ այդ հրատարակության՝ Հայաստանը դասվում է վարկանիշ 2-ում «Իրավունքների կրկնակի խախտումներ[2]», այսինքն նկատվում են աշխատողների պաշտպանության կրկնակի դեպքեր: Սակայն 2022 թ.-ին **Հայաստանի,** Ավստրալիայի, Բուրկինա Ֆասոյի, Գվինեայի, Ջամայկայի, Լեսոտոյի, Նիդեռլանդների, Թունիսի և Ուրուգվայի վարկանիշները վատացել են և դասվում են վարկանիշ 3-ում «Իրավունքների կանոնավոր խախտումներ[3]»: Սակայն աշխատանքային իրավունքների խախտումների հետ մեկտեղ տեղի են ունենում նաև արտադրական անվտանգության խախտումներ՝ ուղեկցվելով տնտեսական վնասներով:

Ակնհայտ է դառնում, որ եթե Հայաստանի դիրքը վատթարացել է ըստ այս ցուցանիշի, և խախտումները կանոնավոր բնույթ են կրում, ապա խախտվում են աշխատանքի պաշտպանության հիմնական սկզբունքները, որոնք յուրաքանչյուր աշխատողի համար ապահովում են արդար աշխատանքային պայմանների իրավունք (ներառյալ աշխատանքի ապահովման և անվտանգության պայմանները, որոնք համապատասխանում են հիգիենայի պահանջներին և հանգստի իրավունքին): Դրանք ընդգրկված են ՀՀ օրենսգրքում, որն ընդունվել է 2004 թ.-ի նոյեմբերի 9-ին և ուժի մեջ է մտել 2005 թ.-ի հունիսի 21-ից, հոդված 242-262[4]:

ՎԿ-ի կայքից առանձնացրել ենք այն արտակարգ դեպքերի քանակը, որոնք կապված են տեխնածին հանգամանքների հետ, այսինքն կարող են ի հայտ գալ աշխատանքային գործունեության ընթացքում:

---

[1] Глобальный индекс МКП по соблюдению прав трудящихся 2021 года, стр. 62, стр. 5

[2] Նույն տեղում, стр. 15

[3] 2022 ITUC Global Rights Index, pages 62, p. 5

[4] Охрана труда в Республике Армения. – Национальный обзор. – МОТ, 2008; 80 с., стр. 13. ISBN 97899292942203791 (электронное издание)

Աղյուսակ 1

2018-2022 թթ.- ին գրանցված տեխնածին արտակարգ դեպքերից տուժածների թիվը[1]

	Տուժած մարդկանց թիվը, մարդ		այդ թվում՝				Փրկվել են	
			զոհվել են		վիրավորվել են			
	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
2018	6378	1826	364	58	6014	1768	295	48
2019	7268	2141	359	68	6909	2073	359	66
2020	6292	1735	376	63	5916	1672	175	37
2021	7190	2448	391	100	6799	2348	177	24
2022	6722	2226	379	89	6343	2137	213	32

ՎԿ-ի կողմից հրապարակված տվյալներից երևում է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում տեխնածին արտակարգ դեպքերից տուժածների թվի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2019 թ.-ին՝ կազմելով 7268 մարդ: Հատկանշական է, որ տուժած տղամարդիկ կազմում են մոտ 71,3 %, իսկ կանայք՝ ընդամենը 28,7 %: Դիտարկվող ժամանակահատվածում տուժած մարդկանց թիվը աճել է 344 մարդով կամ 5,4 %-ով, սակայն մահացությունների մասնաբաժինը ընդհանուր տուժածների թվում մնացել է գրեթե նույնը՝ 5,6 %-ի մատույցներում: Տուժածներում «առյուծի բաժինը» զբաղեցնում է վիրավորների թիվը: Վիրավորների ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2019 թ.- ին և կազմել է 6909 մարդ կամ ընդհանուր տուժածների 95,1 %: Ակնհայտ է, որ տեխնածին արտակարգ դեպքերից մեծապես տուժում են մեծապես տղամարդիկ:

Տուժած մարդկանց ընդհանուր դինամիկան զիգզագաձև է՝ մի տարի բարձրանում է, հաջորդ տարի նվազում: Այն կարելի է բացատրել հետևյալ տրամաբանությամբ: Եթե տվյալ տարում գրանցված տեխնածին արտակարգ դեպքերը ավելանում են, ապա անմիջապես միջոցներ են ձեռնարկվում պատճառների վերացման և չեզոքացման ուղղությամբ, որն էլ հանգեցնում է հաջորդ տարվա դեպքերի նվազմանը:

Վերոգրյալի ապացույց կարող է հանդիսանալ նաև Աղյուսակ 2-ի տվյալները: Այն տարում, երբ տուժածների ընդհանուր թիվը աճում է, հաջորդ տարում զբաղված տղամարդկանց թիվը նվազում է: Այն բացատրվում է հետևյալ կերպ. Տուժածների ընդհանուր թվում մեծ բաժին են կազմում վիրավոր տղամարդիկ, որոնց կորցրել են իրենց աշխատունակությունը: Սակայն այդ դեպքերում գործատուն չի շտապում շուտափույթ լուծել աշխատանքային պայմանագրերը, քանի որ ապաքինման գործընթացը ավարտելուց հետո աշխատակիցը, աշխատունակության վերականգնման պարագայում, կարող է վերադառնալ աշխատանքի: Կկրճատվեն այն աշխատակիցները, որոնք փորձաքննության արդյունքում կհամարվեն անաշխատունակ՝ արտացոլվելով հաջորդ տարվա հաշվետվության մեջ:

[1] Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, հրապակումներ ըստ տարիների, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018-2022թթ.

Աղյուսակ 2

2018-2022 թթ.-ին աշխատանքային ռեսուրսներ. զբաղվածներ, ընդամենը (միջին տարեկան, 1 000 մարդ)[1]

	2018	2019	2020	2021	2022*
Տղամարդ	601.1	605.7	566.0	594.3	-
Կին	447.4	471.6	486.4	494.0	-

*Տվյալները դեռևս հրապարակված չեն:

Աշխատանքային անաշխատունակության դեպքում՝ նեղ իմաստով- կազմակերպությունը, լայն իմաստով- պետությունը, կրում են չնախատեսված ծախսեր, տուժում է արտադրողականությունը:

Աշխատանքային գործունեության ընթացքում դժբախտ պատահարները և մասնագիտական հիվանդություններն ունեն այլ լուրջ հետևանքներ, որոնցից շատերը չեն արտացոլված պաշտոնական վիճակագրության մեջ:[2]

- Հաշմանդամություն ունեցող աշխատողների կենսաթոշակային տարիքը կրճատվում է միջինը հինգ տարով, այսինքն՝ աշխատանքային փորձի կրճատում մոտ 15%-ով, ինչը հանգեցնում է եկամուտների զգալի կորստի:
- Շատ գործազուրկներ հաշմանդամ են, բայց ոչ այն աստիճանի, որ կարողանան անձնական կենսաթոշակ կամ հաշմանդամության փոխհատուցում պահանջել: Այնուամենայնիվ, աշխատունակության կորուստը կարող է բավական նշանակալից լինել, որպեսզի լրջորեն նվազեցնի վերագործարկման հնարավորությունները:
- Գնահատականների հիման վրա աշխատողների 5%-ն ամեն օր բացակայում է աշխատանքից: Կախված տնտեսության ոլորտից, աշխատանքի տեսակից և կառավարման մշակույթից՝ այս ցուցանիշը կարող է տատանվել 2%-ից մինչև 10%:
- Ամենաբարձր ռիսկային ոլորտներում (օրինակ՝ անտառային տնտեսություն) տաս տարվա ընթացքում մահացության մակարդակը գերազանցում է գործազրկության մակարդակը նույն ժամանակահատվածում:
- Զարգացող երկրներում ռիսկի մակարդակը տասն անգամ ավելի բարձր է, քան արդյունաբերական զարգացած երկրներում:

Վերը նշված դեպքերում, երբ աշխատակիցները մասնագիտական աշխատունակության կորստի պատճառով չեն ներկայանում աշխատանքի կազմակերպությունը կրում է ոչ միայն սոցիալական, այլ նաև տնտեսական վնասներ: Փորձագետներն այժմ գիտակցում են, որ ի լրումն վերը նկարագրված մարդասիրա-

---

[1] Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, հրապակումներ ըստ տարիների, Հայաստանը թվերով 2018-2022թթ.

[2] Международное бюро труда, Программа регулирования вопросов труда и инспекции труда, Группа технической поддержки по вопросам достойного труда и Бюро МОТ для стран Восточной Европы и Центральной Азии. – Москва: МОТ, 2016, стр. 7. Эл. ресурс: [https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---europe/---ro-geneva/---sro-moscow/documents/publication/wcms_541332.pdf]

կան և սոցիալական հետևանքների, դժբախտ պատահարներն ու մասնագիտական հիվանդությունները ունեն նաև շատ էական տնտեսական հետևանքներ, որոնք ազդում են ձեռնարկությունների արտադրողականության և, հետևաբար, ամբողջ երկրի արտադրողականության վրա: Առկա է հետևյալ ենթադրությունը, որ դժբախտ պատահարների և մասնագիտական հիվանդությունների ծախսերը իրականում շատ ավելի բարձր են, քան նախկինում ենթադրվում էր, քանի որ ներառում են ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ծախսեր: Բիզնեսի համար դա կարող է նշանակել ապահովագրավճարների ավելացում, բիզնեսի իմիջի և հեղինակության կորուստ, կառավարման ժամանակի վատնում պատահարների հետաքննության և այլ ծախսեր: Պետության մակարդակով այն նշանակում է տնտեսական զարգացման դանդաղում, աշխատանքի տեսչության և այլ հաստատությունների բեռի ավելացում, սոցիալական ապահովության և առողջապահական ազգային ծախսերի ավելացում և այլն[1]:

Գիտական նորույթ: Դիտարկվել են տեխնածին դեպքերից տուժածների դինամիկան և առաջարկվել աշխատանքի պաշտպանությանը և անվտանգությանն ուղղված կարգավորող միջոցառումներ:

Եզրակացություններ: Ներկայումս հանրապետությունում բացակայում են աշխատանքի անվտանգության և պաշտպանության ոլորտում գործատուի գործունեության կարգավորող համալիր մեխանիզմներ:

Տարատեսակ տնտեսական վնասներից խուսափել համար անհրաժեշտ է կազմակերպել և համակարգել աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանությանն ուղղված աշխատանքները, իրականացնել հսկողություն՝ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանությանը վերաբերող օրենսդրական և նորմատիվ-իրավական ակտերի կատարման նկատմամբ, կատարել ընկերությունում արտադրական տրավմատիզմի և մասնագիտական ու արտադրությամբ պայմանավորված հիվանդությունների կանխարգելմանն ուղղված աշխատանքներ, իրականացնել միջոցառումներ՝ ուղղված ընկերությունում աշխատանքի առողջ և անվտանգ պայմաններ ստեղծելուն, աշխատողներին սահմանված արտոնություններ և ըստ աշխատանքի պայմանների հատուցում հատկացնելուն: Սույն համատեքստում կարևոր է կատարել պարբերաբար աշխատատեղում ռիսկերի գնահատման անցկացումը և արտադրական վնասվածքների բոլոր դեպքերի ուսումնասիրումն ու համակարգումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդված
2. ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 17-րդ հոդված
3. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, հրապարակումներ ըստ տարիների, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018-2022թթ.

[1] Նույն տեղում

4. Օնորատի Մ., Յոհանսոն Դե Սիլվա Ս., Միլան Ն. և այլոց Աշխատանք Հայաստանում ավելի լավ ապագայի համար: Աշխատատեղերի դինամիկայի վերլուծություն: Համաշխարհային բանկ, հոկտեմբեր 2019
5. Актуальные проблемы охраны труда: матер. IV Всероссийской научно-практической конференции с международным участием; 22–23 ноября 2018 года / СПбГАСУ. – СПб., 2018. – 190 с.
6. Глобальный индекс МКП по соблюдению прав трудящихся 2021 года, стр. 62
7. Международное бюро труда, Программа регулирования вопросов труда и инспекции труда, Группа технической поддержки по вопросам достойного труда и Бюро МОТ для стран Восточной Европы и Центральной Азии. – Москва: МОТ, 2016, стр. 7. Эл. ресурс: [https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---europe/---ro-geneva/---sro-moscow/documents/publication/wcms_541332.pdf]
8. Охрана труда в Республике Армения. – Национальный обзор. – МОТ, 2008; 80 с., стр. 13. ISBN 97899292942203791 (электронное издание)
9. Прока Н. И. Экономика труда и организации АПК.-М.: КолосС. 2009.-440с.: ил.-(Учебники и учеб. пособия для студентов высш. учеб. заведений). стр. 6
10. РОМАНЧЕНКО Л.Н., ШАРИФУЛЛИНА А.И. ЭКОНОМИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ ТЕХНОГЕННЫХ ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЙ, ГРАЖДАНСКАЯ ОБОРОНА НА СТРАЖЕ МИРА И БЕЗОПАСНОСТИ. Издательство: Академия Государственной противопожарной службы Министерства Российской Федерации по делам гражданской обороны, чрезвычайным ситуациям и ликвидации последствий стихийных бедствий (Москва). Материалы III Международной научно-практической конференции, посвященной Всемирному дню гражданской обороны. В 3-х частях. Том Часть III. 2019. стр. 191-200
11. 2022 ITUC Global Rights Index, pages 62
12. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24068: ՄԱՍ 2
13. https://www.irtek.am/views/act.aspx?aid=119053
14. https://www.irtek.am/views/act.aspx?aid=150003

References

1. «Erexayi iravowqneri masin» HH o'renqi 19-rd hodvac'
2. HH ashxatanqayin o'rensgirq, 17-rd hodvac'
3. Hayastani Hanrapetowt'yan vitwakagrakan komite, hrapakowmner y'st tarineri, Hayastani Hanrapetowt'yan social-tntesakan vitwaky' 2018-2022t't'.
4. O'norati M., Yohanson De Silva S., Milan N. & ayloc Ashxatanq Hayastanowm aveli lav apagayi hamar: Ashxatategheri dinamikayi verlowc'owt'yown: Hamashxarhayin bank, hoktember 2019
5. Aktual'nye problemy ohrany truda: mater. IV Vserossijskoj nauchno-prakticheskoj konferencii s mezhdunarodnym uchastiem; 22–23 nojabrja 2018 goda / SPbGASU. – SPb., 2018. – 190 s.
6. Global'nyj indeks MKP po sobljudeniju prav trudjashhihsja 2021 goda, str. 62

7. Mezhdunarodnoe bjuro truda, Programma regulirovanija voprosov truda i inspekcii truda, Gruppa tehnicheskoj podderzhki po voprosam dostojnogo truda i Bjuro MOT dlja stran Vostochnoj Evropy i Central'noj Azii. – Moskva: MOT, 2016, str. 7. Jel. resurs: [https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---europe/---ro-geneva/---sro-moscow/documents/publication/wcms_541332.pdf]
8. Ohrana truda v Respublike Armenija. – Nacional'nyj obzor. – MOT, 2008; 80 c., str. 13. ISBN 97899292942203791 (jelektronnoe izdanie)
9. Proka N. I. Jekonomika truda i organizacii APK.-M.: KolosS. 2009.-440s.: il.-(Uchebniki i ucheb. posobija dlja studentov vyssh. ucheb. zavedenij). str. 6
10. ROMANChENKO L.N., ShARIFULLINA A.I. JeKONOMIChESKIE POSLEDSTVIJa TEHNOGENNYH ChREZVYChAJNYH SITUACIJ, GRAZhDANSKAJa OBORONA NA STRAZhE MIRA I BEZOPASNOSTI. Izdatel'stvo: Akademija Gosudarstvennoj protivopozharnoj sluzhby Ministerstva Rossijskoj Federacii po delam grazhdanskoj oborony, chrezvychajnym situacijam i likvidacii posledstvij stihijnyh bedstvij (Moskva). Materialy III Mezhdunarodnoj nauchno-prakticheskoj konferencii, posvjashhennoj Vsemirnomu dnju grazhdanskoj oborony. V 3-h chastjah. Tom Chast' III. 2019 str. 191-200
10. 2022 ITUC Global Rights Index, pages 62
11. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24068: ՄԱՍ 2
12. https://www.irtek.am/views/act.aspx?aid=119053
13. https://www.irtek.am/views/act.aspx?aid=150003

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ

Տաթևիկ Սմբատի Փարսադանյան

Համառոտագիր: Տվյալ հոդվածի **արդիականության** էությունն է. Աշխատանքային գործունեության արդյունավետ իրականացման համար խիստ անհրաժեշտ է պահպանել աշխատանքի անվտանգությունը և աշխատողների պաշտպանությունը: Աշխատանքի պաշտպանության մակարդակն անմիջական ազդում է երկրի ժողովրդագրական իրավիճակի և բազմաթիվ սոցիալական խնդիրների լուծման վրա: **Հոդվածի նպատակն** է կազմակերպությունների հետևողական աշխատանքի վերլուծություն իրականացնել՝ արտադրական վթարների և տեխնածին տուժածների տեսանկյունից: **Տվյալ նպատակին հասնելու համար լուծվել է հետևյալ խնդիրները.** վերլուծել գրանցված տեխնածին արտակարգ դեպքերից տուժածների թիվը; ուսումնասիրել զբաղվածների թիվը ըստ սեռերի՝ տղամարդ, կին; համեմատել գրանցված տեխնածին արտակարգ դեպքերից տուժածների թիվը և զբաղված տղամարդ թիվը: **Օգտագործվել է հետևյալ մեթոդաբանությունը.** հետազոտության ընթացքում կիրառվել են տվյալների հավաքագրման, համեմատական, ընդհանրացման մեթոդները:

Աշխատանքի **գիտական նորույթը** կայանում է նրանում, որ համեմատության

միջոցով պարզաբանվել է գրանցված տեխնածին արտակարգ դեպքերի հետևանքով զբաղված տղամարդկանց թվի կրճատումը և ուսումնասիրվել են տնտեսական վնասները: **Ստացված հիմնական արդյունքն է** կատարել ընկերությունում արտադրական տրավմատիզմի և մասնագիտական ու արտադրությամբ պայմանավորված հիվանդությունների կանխարգելմանն ուղղված աշխատանքներ՝ ժողովրդագրական իրավիճակի հավասարության պահպանման նպատակով: **Ստացված արդյունքների կիրառման հնարավորությունն է.** գենդերային հավասարության պահպանման և տնտեսական կորուստների չեզոքացման նպատակով աշխատանքային գործընթացների անվտանգ կազմակերպում:

Բանալի բառեր. աշխատուժ, շրջակա միջավայրի պայմաններ, աշխատանքային պայմաններ, արտադրության վտանգավոր գործոն, անաշխատունակություն, աշխատունակության կորուստ, տնտեսական վնասներ, տուժածների թիվ:

ОХРАНА ТРУДА И БЕЗОПАСНОСТЬ НА ПРИМЕРЕ РА

Татевик Смбатовна Парсаданян

Аннотация. Суть **актуальности** данной статьи заключается в следующем: для эффективного осуществления трудовой деятельности очень важно поддерживать безопасность труда и защиту работников. Уровень охраны труда напрямую влияет на демографическую ситуацию в стране и решение многих социальных проблем.

Цель статьи - проанализировать планомерную работу организаций с точки зрения несчастных случаев на производстве и техногенных травм. Для достижения поставленной цели были решены следующие

Задачи:

- Анализировать количество пострадавших от техногенных ЧС; изучить численность занятых по полу: мужчины, женщины;
- Сравнить количество зарегистрированных пострадавших от техногенных чрезвычайных ситуаций и количество работающих мужчин.

Методика. В ходе исследования использовались методы сбора данных, сравнения и обобщения.

Научная новизна. Выяснение факта сокращения численности занятых мужчин в результате техногенных чрезвычайных ситуаций и изучения экономического ущерба путем сопоставления.

Основным полученным результатом является проведение работ, направленных на профилактику производственного травматизма и профессионально-производственных заболеваний в компании, с целью сохранения демографической ситуации на выравнивании.

Полученные результаты можно применять в безопасной организации трудовой деятельности с целью соблюдения гендерного равенства и нейтрализации экономического дефицита.

Ключевые слова: рабочая сила, экологическая обстановка, условия труда, вредный производственный фактор, безработица, потеря трудоспособности, экономический ущерб, количество пострадавших.

LABOR PROTECTION AND SAFETY: CASE OF RA

Tatevik Smbat Parsadanyan

Summary. The essence of this article's relevance is: for the effective implementation of work activities, it is necessary to maintain the safety of work and the protection of workers. The level of labor protection directly affects the demographic state of the country and the solution of many social problems. The **purpose** of the article is to provide the consistent analysis of organizations' work process from the point of view of production accidents and man-made casualties. To achieve this **goal,** the following **problems** were solved: the number of victims of man-made emergencieswas analyzed; the number of employees according to their gender was studied: male, female; the number of registered man-made emergency victims and the number of employees was compared. The following **methodology** was used: the methods of data collection, comparison, and generalization were used during this research.

The **scientific novelty** of the research lies in the fact that through comparison method the reduction in the number of employed men resulting from man-made emergency cases was clarified and the economic damages of that process were studied.**The obtained main result is:** to carry out measures aimed at prevention of injuries and occupational, production-related diseases in the company, in order to maintain the equality of the demographic situation. **The practical implication** of the obtained results: safe organization of work processes in order to maintain gender equality and neutralize economic losses.

Keywords: labor, environmental conditions, working conditions, hazardous production factor, unemployment, loss of working ability, economic damages, number of victims.